ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ

№ 86/16-L «11» 05 2026թ.

ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) գիտական խորհրդի 2023 թ. մարտի 23-ի թիվ 9/2 որոշմամբ հաստատված ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի ընտրության ընթացակարգի» (այսուհետ՝ Ընթացակարգ) 5-րդ կետի պահանջները և ղեկավարվելով ԵՊՀ կանոնադրության 57-րդ կետի 10-րդ ենթակետով՝

հրամայում եմ՝

1. ԵՊՀ ներքոհիշյալ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների թափուր պաշտոնները համալրելու նպատակով 2026թ. հունիսի 11-ին՝ Ընթացակարգի համաձայն, նշանակել և անցկացնել մրցութային ընտրություն.

Հ/Հ	ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓ
1	Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ	1
2	Աստվածաբանության ֆակուլտետ	1
3	Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ	1

2. ԵՊՀ գիտական քարտուղարին՝ ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների ընտրության նշանակման ու անցկացման վերաբերյալ հայտարարությունը հրապարակել ԵՊՀ ինտերնետային կայքէջում և սահմանված կարգով կազմակերպել ստորաբաժանումների ղեկավարների թեկնածուների առաջադրման վերաբերյալ փաստաթղթերի ընդունման գործընթացը:

3. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել ԵՊՀ պրոռեկտորներին, անձնակազմի կառավարման բաժնին, գիտական քարտուղարին և ստորաբաժանումների ղեկավարներին:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ՝ Հ. Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ